աստուածուհիները, խմբված այրի մուտքի դէմ, պաղատում են, որ դուրս գայ, բայց նա խուլ է մնում ու անհաշտ: Այն ժամանակ աստուածները դիմում են խորամանկութեան. սկսում են նւագել ու պարել: Ամատերասու չի համբերում ու գլուխը դուրս է հանում հետաքրքրութիւնից: Աստուածները ճարպիկ շարժումով մի հայելի են դնում նրա առաջ, եւ մինչդեռ նա զմայլւում է ինքն իր դէմքով, միւսները արագ խցկում են քարայրի մուտքը: Այդպիսով նա նորից մնում է դուրսը եւ լոյս է տալիս բոլորին:

Իսկ հայելին ու պարը դառնում են այդ օրից տաճարներում մի սիմբոլ, մի նշան ի յիշատակ այդ դէպքի:

Ճապոնական Ոլիմպոսում աստուածները շատ են: Դրանցից արդէն յիշել եմ Իզանագի ու Իզանամի, որոնցից առաջացած է Ճապոնում ամեն կեանք ունեցող բան, Ամատերասու, որ միկադոյի նախամայրն է, Ամիդա, որ գաղափարական ու յաւիտենական լոյսի աստուածն է եւ Բուդդհայի մարմնացումներից մէկը եւ որի անունը պէտք է յիշել միւս աշխարհն անցնելիս, Կուաննօն, գթութեան աստուածուհին, եւ Ժիզօ, որ երեխաների, յղի կանանց ու ճամփորդների հովանաւորն է ու պաշտպանը:

Բացի սրանցից պէտք է յիշել եւ հետեւեալները. Ֆուդօ, իմաստութեան աստուածը, ոգեւորութեան ճաճանչներով շրջանակւած, մի ձեռքին հատու սուր՝ կրքի ոգիների հետ կռւելու համար, եւ միւսում պարան, այս կրքերն ու ցանկութիւնները շղթայելու համար: Յետոյ գալիս են բաղդաւորութեան եօթն աստուածները, որոնք են՝ Եբիսու – աշխատասիրութիւն, Դայկօկու, – հարստութիւն,